

(MEHKO)

Լավ հարևանի գործողություններ

Պահեք համայնքն ապահով



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱՂԲ

Օգնեք դանդաղեցնել կլիմայի փոփոխությունները

Կալիֆորնիայի նահանգայինի օրենքի Սենատի օրինագիծ (SB) 1383-ը նպատակ ունի աղբավայրերից դուրս թողնել սննդամթերքը և քայքայվող այլ նյութերը, որոնք հայտնի են որպես օրգանական աղբ՝ նվազեցնելու ջերմոցային գազերի արտանետումները, որոնք նպաստում են կլիմայի փոփոխությանը: Օրգանական աղբը առանձին հավաքելը օգնում է, որ դրանք աղբավայրեր չմտնեն:

Բաժանորդագրվեք օրգանական աղբի հավաքման ծառայություններին՝ որպես հավելում աղբ տեղափոխող ձեր ընկերության միջոցով աղբահանության և վերամշակման ծառայություններին, կամ ներկայացրեք ինքնակառավարման ծրագիր **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչություն:**

Այցելեք www.FightFoodWasteLA.com՝ պարզելու, թե ինչպես կարող եք բավարարել պայմանները:



MEHKO-ն թույլ է տալիս մասնավոր տանը գործել որպես ռեստորան, որտեղից հաճախորդները կարող են վերցնել իրենց պատվերը, որտեղից նրանց կարող են առաքել պատվերը կամ որտեղ նրանք կարող են ճաշել: Տանն արվող այս գործողությունները կարող են ազդել շրջակա բնակելի տարածքի վրա: Հաշվի առեք այս ուղեցույցները՝ ուշադիր հարևան լինելու և ձեր համայնքը ապահով պահելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ph.lacounty.gov/mehko



Environmental Health Division
5050 Commerce Drive
Baldwin Park, CA 91706



COUNTY OF LOS ANGELES
Public Health



ՃԱՐՊԻ, ԲՈՒՍԱՅՈՒՂԻ ԵՎ ՅՈՒՂԻ ՀԵՌԱՑՈՒՄ

Ճարպը, կերակրի յուղը (բուսայուղը) կամ յուղի նստվածքը ՉԻ կարելի ցնել լվացարանի մեջ, քանի որ դրանք կարող են խցանել արտահոսքը և առաջացնել կոյուղու խողովակների և սեպտիկ համակարգերի խափանում: Յուղի նստվածքը կարելի է թափել աղբարկղը: Դուք կարող եք նաև յուղը ցնել հին կաթի տուփերի կամ մեկանգամյա օգտագործման այլ տարաների մեջ: Սննդի մնացորդները կարելի է նետել վերամշակվող աղբի կանաչ աղբարկղը, ոչ թե լվացարանի աղբաղացը:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

Պահեք ձեր թաղամասն անվտանգ խորհուրդ տվեք հաճախորդներին վարել դանդաղ և անվտանգ, երբ գտնվում են բնակելի թաղամասում: Երթևեկությունը նվազեցնելու համար սնունդը վերցնելը նախատեսեք տարբեր ժամերի: Համոզվեք, որ հաճախորդները չեն փակում փողոցները իրենց սննդի պատվերը վերցնելիս:



ԱՂԲ



Աղբարկղերը պետք է տեղադրվեն հանրության աչքից և հարևանի տարածքից հեռու, որպեսզի նվազեցվի հոտի տարածումը օդում: Չափից ավելի մի ցրեք աղբամանները և պատշաճ կերպով կապեք աղբի տոպրակները նախքան դրանք դնել նետելը: Աղբը թափեք արտահոսք չունեցող և կրծողներից պաշտպանող տարաներում՝ վնասատուներից խուսափելու համար: Նետեք վերամշակվող նյութերը իրենց համապատասխան աղբամանները: Ձեր հաճախորդներին տրամադրեք աղբարկղ, որպեսզի կանխեք աղբի կուտակումը փողոցում: Կապ հաստատեք ձեր աղբահանության ծառայության հետ՝ անհրաժեշտության դեպքում աղբահանության լրացուցիչ ժամեր նշանակելու համար:

ԱՂՄՈՒԿ

Օգնեք նվազեցնել աղմուկը ձեր թաղամասում: Եթե բարձրախոսով որևէ երաժշտություն եք նվագարկում, երբ հաճախորդները ճաշում են, խորհուրդ է տրվում նվազագույնի հասցրել ձայնը: Հաշվի առնելով ձեր հարևաններին՝ խորհուրդ չի տրվում դրսում բարձրախոսով երաժշտություն միացնել: Պահպանեք կանոնավոր աշխատանքային ժամերը: Ուշադիր եղեք, որ սնունդ վերցնող հաճախորդները չաղմկեն: Հետևեք անհանգստացնելուն վերաբերող Ձեր տեղական կանոնակարգին:



ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆՈՒՄ



Հաճախորդների համար օգտագործեք տարածքում գտնվող կայանատեղի, որը նշանակված և հաստատված է այդ նպատակի համար: Ձեր մեքենայի անցուղում, եթե կիրառելի է, ունեցեք նշանակված տեղ հաճախորդների կայանման համար: Հատկացրեք համապատասխան վայր, որտեղ հաճախորդներին կտրվեն սննդի պատվերները: Եթե կայանատեղիները սահմանափակ են, մտածեք սննդի պատվերներն առաքելու մասին:

ՀՐԴԵՀԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Նվազեցրեք ձեր տանը հրդեհի բռնկման վտանգը. դիմեք տեղական հրշեջ բաժին՝ հետևելու ձեր տարածքում գործող կանոններին: Ցանկացած դյուրավառ նյութ պահեք շենքերից 100 ոտնաչափ (ֆուտ) հեռավորության վրա: Համոզվեք, որ ձեր հասցեի համարները տեսանելի են, որպեսզի շտապօգնության անձնակազմը կարողանա գտնել ձեր տունը: Համոզվեք, որ խորովածի հաստատված սարքերը գտնվում են ձեր տնից և այլ կառույցներից ապահով հեռավորության վրա: Բոլոր տներում պետք է տեղադրվեն ծխի ազդանշաններ և ածխածնի մոնօքսիդի դետեկտորներ: Կերակրի պատրաստման վայրում ունեցեք կրակմարիչ (տիպ 10B:C):

